ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Եվրոպական միության Թայեքս (TAIEX) ծրագրի շրջանակում Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի պատվիրակության կողմից Սլովենիայի Հանրապետության կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով կատարած ճանաչողական այցի վերաբերյալ

.

2014 թվականի մարտի 25-ից 26-ը Եվրոպական Միության ԹԱՅԵՔՍ (TAIEX) ծրագրի շրջանակում Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի նախագահի տեղակալ Արեգ Շուշյանը, անդամներ Արմեն Խուդավերդյանը և Արտակ Սարգսյանը Լյուբլյանայում ունեցել են հետևյալ աշխատանքային հանդիպումներն ու քննարկումները՝

Մարտի 25, Վճռաբեկ դատարան, Նինա Բեգեգո, Սլովենիայի դատական համակարգի էթիկա

Վճռաբեկ դատարանում կայացած այս հանդիպման ընթացքում քննարկվել է Սլովենիայում գործող դատավորների էթիկայի կանոնագիրքը, որը սահմանում է դատավորների էթիկայի սկզբունքները, էթիկայի կանոնները, էթիկայի կանոնների խախտման դեպքերը և դրանց լուծումները: Նշված կանոնագիրքը մշակվել է դատավորների միության կողմից և ներառում է ինչպես մասնագիտական, այնպես էլ մասնավոր գործունեությանն առնչվող կարգավորումներ: Սլովենիայի դատավորների էթիկայի կանոնները հիմնված են ՄԱԿ-ի կողմից ամրագրված դատավորի վարքագծի բանգալորյան սկզբունքների վրա: Դատավորներն անցնում են նաև պարտադիր վերապատրաստումներ, որոնք ներառում են էթիկային առնչվող կոնկրետ խնդրահարույց իրավիճակների քննարկումներ, ինչպես նաև անկախության ու կողմնակալության թեսթ:

Էթիկայի կանոնագրքի վերանայում, ըստ էության, Սլովենիայում չի կատարվում: Նախատեսվում է մշակել կանոնագրքի մեկնաբանությունների ձեռնարկ, որը հնարավորություն կտա կանոնագիրքը դարձնել առավել հասկանալի և կիրառելի:Սույն միջոցառումը ներառված է ԳՐԵԿՈ-ի առջև ստանձնած պարտավորությունների ցանկում:

Սլովենիայի հանրային ծառայողների ակտիվների հայտարարագրերի ներկայացման, նրանց շահերի բախման և անհիմն հարստացման հարցերին առնչվող իրավական կարգավորումները տարածվում են նաև դատավորների վրա: Դատավորների համար համատեղ աշխատանքի սահմանափակումներ չկան, որը բացթողում է համարվում և ներառված է ԳՐԵԿՈ-ի հանձնառություններում: Վճռաբեկ դատարանում տեղի ունեցած հանդիպմանը Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի անդամներին ներկայացվել են նաև Սլովենիայի դատական համակարգի բարեխղճության /integrity/ վերաբերյալ ԳՐԵԿՈ-ի մոնիտորինգի արդյունքները:

Մարտի 25, Սլովենիայի Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով, Նատալիա Ուլագա, Սլովենիայի ակտիվների հայտարարագրման համակարգ

Սլովենիայի ակտիվների հայտարարագրման գործընթացը կարգավորվում է «Բարեխղճության և կոռուպցիայի դեմ պայքարի մասին» Սլովենիայի օրենքով և հայտարարատուների շրջանակը ներառում է պատգամավորներին, դատախազներին, դատավորներին, նախարարներին, նախարարության համակարգում գործող մարմինների ղեկավարներին, պետական մարմինների ղեկավարներին, տեղակալներին, պետական ծառայութունների ղեկավարներին, պետական ընկերությունների կառավարիչներին և պետական կազմակերպությունների ղեկավարներին, այն պետական պաշտոնյաներին, որոնք ներգրավված են պետական գնումների գործընթացում (մրցույթային հանձնաժողովի անդամներն այն դեպքերում, երբ մրցույթով նախատեսված ապրանքների կամ

ծառայությունների ձեռքբերման արժեքը գերազանցում է 100.000 եվրոն, իսկ շինարարական աշխատանքների պարագայում՝ 80.000 եվրոն), վերահսկողական և հսկողություն իրականացնող մարմինների ղեկավարներին, դիվանագետներին, միջազգային կառույցների ներկայացուցիչներին և այլն: Պաշտոնատար անձն իր անունից ներկայացնում է իր ակտիվների հայտարարագիրը, իսկ ընտանիքի3 անդամներից հայտարարագիր պահանջվում է ըստ անհրաժեշտության: Անգամ այն դեպքերում, երբ գույքը ամուսնական համատեղ սեփականություն է, սակայն ձևակերպված է ամուսնու անունով՝ պաշտոնատար անձն իրավունք ունի չհայտարարագրել այն:

Սլովենիայի պետական կառավարման մարմիններում նշանակված են էթիկայի հարցերով պատասխանատուներ, որոնք հայտարարագիր ներկայացնող պաշտոնյաների ցանկը և նրանց վերաբերյալ տվյալները ուղարկում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով, ինչպես նաև հայտարարագրերի լրացման վերաբերյալ խորհրդատվություն են տրամադրում հայտարարատու հանդիսացող հանրային ծառայողներին: Ակտիվների հայտարարագրերը ներկայացվում են ըստ սահմանված ձևաթղթի, որը ներառում է հայտարարատուի անձնական տվյալները, պաշտոնի անվանումը և գործառույթները, նախկինում զբաղեցրած պաշտոնները և գործառույթները, այլ աշխատանքի կամ պաշտոնների վերաբերյալ տեղեկատվությունը, անշարժ գույքի տվյալները, շարժական գույքը, դրամական հաշիվները բանկերում (միայն 10.000 եվրոն գերազանցելու դեպքում, իսկ այլ արժույթներով հաշիվների դեպքում հայտարարագրման նշված շեմը հաշվարկվում է ԿԲ–ի կողմից սահմանված եվրոյի փոխարժեքով), տրված փոխառությունները և երաշխիքները, ստացված վարկերը և պարտավորությունները, 10.000 եվրո արժեքը գերազանցող արժեթղթերի տվյալները (տեսակը, ISIN միջազգային կոդը, քանակը, գումարը) և այլն: Հայտարարատուները եկամուտների վերաբերյալ տվյալներ չեն ներկայացնում և եկամուտներին առնչվող բոլոր գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը ստացվում է հարկային մարմնից՝ էլեկտրոնային եղանակով:

Սլովենիայում հայտարարագրման օրենսդրական կարգավորումների խախտման համար սահմանված են պատասխանատվության միջոցներ: Մասնավորապես, սխալ և ոչ ամբողջական ներկայացված հայտարարգրերի դեպքում նախատեսված է 400-1200 եվրո տուգանք, իսկ հայտարարագիր չներկայացնելու համար՝ աշխատավարձի 10% իջեցում ամեն ամիս՝ մինչև նվազագույն աշխատավարձի մակարդակը:

Մարտի 26, Սլովենիայի Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով Մատեյ Կովաչիչ, Սլովենիայի պետական մարմինների տվյալների բազաների հետ կապ

Էլեկտրոնային համակարգի միջոցով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը անմիջականորեն կապված է պետական մարմինների տեղեկատվական բազաներին, որոնցից օգտվելու սահմանափակումներ Հանձնաժողովը չունի: Հանձնաժողովը հայտարարագրերի տվյալների և առցանց տեղեկատվական բազաների միջոցով իրականացնում է բյուջեի ծախսերի, պետական գնումների և պետական ընկերությունների ֆինանսավորման գործարքների վերլուծություն և վերահսկողություն: Այն ուսումնասիրում է գնումների պայմանագրերը, պետական և պետական մասնակցությամբ ընկերությունների շահույթները և մեկ աղբյուրից պետական գնումները, ինչպես նաև բացահայտում է հայտարարատուների մերձավորներին պատկանող ընկերությունների մասնակցությունը պետական գնումներին, որն օրենքով արգելված է:

Մարտի 26, Սլովենիայի կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով, Ռոման Բերչիչ, Սլովենիայի ակտիվների հայտարարագրերի ուսումնասիրության, կոռուպցիոն ռիսկերի գնահատման և քննության գործընթացներ

Սլովենիայում ակտիվների հայտարարագրերի վերլուծությունն ու հսկողությունը իրականացվում է օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հանձնաժողովը իրականացնում է կոռուպցիոն ռիսկերի գնահատում և էթիկայի կանոնների խախտումների ու շահերի բախման դեպքերի բացահայտում՝ հայտարարագրերում առկա անհամապատասխանությունների և խնդիրների հիման վրա: Խնդրահարույց և կասկածելի հայտարարագրերը այնուհետև խորը վերլուծության են ենթարկվում, որի ընթացքում Հանձնաժողովը համագործակցում է հարկային ծառայության, ֆինանսական դիտարկումների կենտրոնի, դատախազության, քննչական մարմինների և ոստիկանության հետ:

Սլովենիայում գործում է իրազեկիչների ինստիտուտը և իրազեկիչների կողմից տարեկան ստացվում է մինչև 1200 հաղորդագրություն, որոնց 30 % ենթարկվում է խորը վերլուծության: Անանուն դիմումներն ու տեղեկությունները խորը5 վերլուծության համար հիմք չեն հանդիսանում, եթե դրանցում չկան կոնկրետ փաստեր, իսկ ներկայացված տեղեկությունը ընդհանրական է:

Հանձնաժողովը ակտիվ համագործակցում է իրավապահ մարմինների հետ և, կոնկրետ կասկածների առկայության դեպքում, համատեղ որոշվում է հետագա գործողությունների և աշխատանքների կազմակերպման ընթացքը: Հանձնաժողովը քրեական տարրեր պարունակող դեպքերի կապակցությամբ դիմում է դատախազություն և անմիջապես հայտնում ոստիկանություն: Հանձնաժողովի աշխատակիցները ընդգրկվում են ոստիկանության կամ դատախազության կողմից ստեղծված հետաքննության խմբերում: Հանձնաժողովը դատախազության, ոստիկանության, հարկային ծառայության և այլ մարմինների հետ ունի համագործակցության հուշագրեր:

Մարտի 26, Սլովենիայի կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով, Յուրի Շկրեբեց, Սլովենիայում շահերի բախման իրավիճակների կառավարում

Սլովենիայի օրենսդրությամբ շահերի բախում է սահմանված այն իրավիճակը, երբ պաշտոնատար անձի անձնական կամ մասնավոր շահերը ազդում են կամ թվում է թե ազդում են նրա պաշտոնական պարտականությունների անկաշկանդ

իրականացմանը: Շահերի բախման կարգավորումները տարածվում են ինչպես պետական պաշտոնյաների, հանրային ծառայողների, կառավարման օղակների և հսկողություն իրականացնող մարմինների, այնպես էլ այն ընկերությունների վրա, որոնց բաժնետոմսերի հսկիչ փաթեթը պատկանում է պետությանը կամ ՏԻՄ-երին: Պետական պաշտոնյաները պետք է խուսափեն շահերի բախման իրավիճակներից, իսկ դրանց առաջացման դեպքում անմիջապես տեղեկացնեն իրենց անմիջական ղեկավարին, իսկ վերջինիս բացակայության դեպքում նրա տեղակալին: Շահերի բախման իրավիճակում հայտնվելու մասին ղեկավարությանը չտեղեկացնելու դեպքում օրենքը սահմանում է տուգանք՝ 400-1200 եվրոյի չափով և պաշտոնատար անձանց տուգանելու մասին որոշումը հրապարակվում է Հանձնաժողովի կայքէջում:

Մարտի 26, Սլովենիայի կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով, Յուրի Շկրեբեց, պաշտոնների անհամատեղելիության Սլովենիայի փորձ

Պաշտոնների անհամատեղելիության կարգավորումները Սլովենիայում տարածվում են միայն այն պաշտոնատար անձանց վրա, ովքեր ներկայացնում են հայտարարագիր և ստանում են պետական բյուջեից աշխատավարձ: Գիտամանկավարժական և ստեղծագործական գործունեության հետ կապված սահմանափակումներ Սլովենիայի օրենսդրությամբ սահմանված չեն: Եթե մի քանի կազմակերպություններում գիտամանկավարժական գործունեություն իրականացնելու աշխատաժամերը գերազանցում են պետական պաշտոնյայի համար սահմանված ժամանակին, ապա հանձնաժողովը կարող է սահմանափակում մտցնել նույնիսկ գիտամանկավարժական գործունեության նկատմամբ: Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը օրենսդրությամբ սահմանված արգելք է: Ձեռնարկատիրական գործունեություն է համարվում նաև այն իրավիճակը, երբ պետական գնումների կամ կոնցեսիաների տրամադրման գործընթացին մասնակցում է ընկերություն, որում պաշտոնյան կամ նրա ընտանիքի անդամը ունի 5% և ավելի մասնակցություն: Ձեռնարկատիրական գործունեության օրենսդրական

կարգավորումները խախտելու համար կիրառվող պատժամիջոցներն են՝ պետական գնումների պայմանագիրն առոչինչ ճանաչելը և 400-4000 եվրոյի չափով տուգանքի սահմանումը: Յուրաքանչյուր պաշտոնյա իր գործատուին ներկայացնում է ընկերություններում իր մասնակցության մասին տեղեկատվություն, որն ուղարկվում է Հանձնաժողովին: Այդ ընկերությունները ներառվում են համապատասխան պետական գնումների պայմանագրերի կնքման համար արգելված ընկերությունների ցանկում: Պաշտոնյայի պաշտոնավարման դադարից հետո, մինչև երկու տարի, նրան պատկանող ընկերություններին արգելվում է մասնակցել պետական գնումների գործընթացներին: